



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ.
«ԲՆԱՊԱՌԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ



Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«17» 05 2017թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻԶԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 48

Զեռնարկողը՝

<<Բարձրավոլի Էլեկտրացանցեր>> ՓԲԸ
Բ. Երևան, Զոր. Անդրանիկի 1

Գործունեությունը՝

**<<110 կՎ Լալվար և Նոյեմբերյան օդային գծի
փոխարինում>> նախագծի շրջակա միջավայրի
վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

**<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի
տնօրեն՝**

Վ. Սահակյան



Առդիր եզրակացությունը՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՀԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 48

<<17 >> 05 2017թ.

**<<110կՎ Լալվար և Նոյեմբերյան գծի փոխարինում>> աշխատանքային
նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման
հաշվետվություն**

Աղյուսակ 87Կ ԾՐ/ՏԱ/ՀՀ
Ա. ՌԵՎՈՐԴԱ Հ. Հ. Օ. Ժ.
17.05.2017թ.

Պատվիրատու՝

Նախագծող՝

Ներկայացված նյութեր՝

Տեղադրման վայրը՝

<<Բարձրավոլտ էլեկտրացանցեր>> ՓԲԸ

<<Բարձրավոլտ էլեկտրացանցեր >> ՓԲԸ

Աշխատանքային նախագիծ.

- շրջակա միջավայրի վրա ազդեցության (ՇՄԱԳ) հաշվետվություն,
- նախագծային փաստաթղթեր և գծագրական նյութեր:

<<Լոռու և <<Տավուշի մարզեր



Համաշխարհային Բանկն աջակցում է Հայաստանի Կառավարությանն ընթացքի մեջ գտնվող էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի (ԷՄՀԾ) ներքո էլեկտրահաղորդման ցանցի հզորացմանը: ԷՄՀԾ-ի ներքո կան խնայողություններ, որոնք Կառավարությունը մտադիր է օգտագործել 110կՎ «Լալվար» և 110կՎ «Նոյեմբերյան» օդային գծերը /ՕԳ/ փոխարինելու համար, որոնք անցնում են նույն երկշղթա հենարանների վրայով.

ա/ 110կՎ «Նոյեմբերյան» ՕԳ-ն, որը սկսում է 220/110/35կՎ «Ալավերդի-2» ենթակայանից և հասնում է մինչև Հաղթանակ գյուղում գնտվող 110/35կՎ «Նոյեմբերյան» ենթակայանը:

բ/ 110կՎ «Լալվար» ՕԳ-ն, որը սկսում է 220/110/35կՎ «Ալավերդի-2» ենթակայանից և հասնում է մինչև 110/35կՎ «Նոյեմբերյան» ենթակայան՝ ունենալով T-ածև ճյուղավորում դեպի «Սաղամիլու» ենթակայան (Վրաստան):

Նոր ՕԳ-երն ունենալու են նոր երկշղթա հենարաններ և դրանց համար նախատեսված հիմքեր, նոր ՊԱԱՀ-եր (պողպատով ամրանավորված այսումինե հաղորդալար), նոր օպտիկական մանրաթելով ամպրոպապաշտպան ճոպան /ՕՄԱՃ/, հողակցում յուրաքանչյուր հենարանի տեղում, և «Ալավերդի-2» ենթակայանի միջոցով նոր կապ Էներգահամակարգի հետ, նոր միացություններ Հաղթանակում գտնվող 110/35կՎ «Նոյեմբերյան» բաշխիչ ենթակայանի և նոր հիմնական ՕԳ-ից T-ածև միացություններ «Ախթալա» ենթակայանի և «Մատուռ» ենթակայանի հետ:

Համաձայններկայացված փաստաթղթերի՝ հաշվի են առնվել ծրագման չորս այլնտրանքներ հիմվելով շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցության և հարկադիր վերաբնակեցման ծավալների վրա.

Առաջարկվող նոր ծրագիծը կլինի «Ալավերդի-2» ենթակայանից գոյություն ունեցող 110կՎ միջանցքի հյուսիսային մասի 50մ-ի սահմաններում, կհատի Հաղպատի տարածքում գոյություն ունեցող միջանցքը և կանցնի դեպի «Նոյեմբերյան» ենթակայանի գոյություն ունեցող 110կՎ միջանցքի հարավային մասի 50մ-ի սահմանները: Քննարկված չորս տարրերակներից այս ծրագիծը ընտրվել է որպես գերադասելի տարրերակ, քանի որ տնտեսապես կենսունակ է, ունի շրջակա միջավայրի և սոցիալական նվազագույն ազդեցություններ: 110կՎ Լալվար և Նոյեմբերյան ՕԳ-երի՝ մոտավորապես 25.5կմ երկարությամբ, միջանցքը հիմնականում տեղակայված է Լոռու մարզում, իսկ էլեկտրահաղորդման գծի մի փոքր հատվածը անցնում է Տավուշի մարզով (ծովի մակարդակից 500մ-ից մինչև 1490մ բարձրության վրա):

110կՎ ՕԳ-երը սկսվում են «Ալավերդի-2» ենթակայանից՝ որը գտնվում է Դեբեդ գետից բավականին բարձր գտնվող Սանահինի սարահարթում: Հետո ձորակի վրայով անցնում են Ակներ գյուղի սարահարթ, ապա Դեբեդի աջ վտակ Քիստում գետակի կիրճի վրայով՝ Հաղպատի սարահարթ: Անցնելով սարահարթի ու Դեբեդի կիրճի եզրագծով ՕԳ-երը Հաղպատի սարահարթից ծգվում են Դեբեդի լայնացող կիրճի աջակողմյան զարդարակ անտառածածկ լանջերով (որտեղ պլանավորված է Տ-ածն ճյուղավորմամբ անցում դեպի «Ախթալա» ենթակայան): Նեղոց գյուղի սահմաններում ՕԳ-ը թոփչք են կատարում ծորի վրայով /այստեղ բնակավայր կա/ և շարունակում են անցնել Դեբեդի աջակողմյան անտառածածկ լանջերի երկայնքով՝ գետի հարավային ափով: Նեղոց գյուղից հետո ՕԳ-երը հատում են ճանապարհը և գետը՝ անցնելով Դեբետ գետի կիրճի ծախ ափ՝ Փոքր Այրումի սարահարթ: Այնտեղից ՕԳ-երը շարունակում են ծգվել Ճոճկանի սարահարթով մինչև Մեծ Այրումից հոսող Դեբեդի ծախ վտակ Նահատակ գետի ծորը: Զորից հետո ՕԳ-երը անցնում են Ճոճկանի սարահարթով՝ մշակվող դաշտերի և հարթավայրերի վրայով (որտեղ պլանավորված է Տ-ածն ճյուղավորմամբ անցում դեպի «Մատուռ» ենթակայան), ապա ևս մեկ անգամ անցնում են Դեբեդ գետի կիրճի՝ գետի ու ավտոմայրուղու վրայով հասնում են Հաղթանակ գյուղ, որի տարածքում է գտնվում Նոյեմբերյան ենթակայանը:

Նոր ՕԳ-ն ունենալու է նոր երկշյա հենարաններ և դրանց համար նախատեսված հիմքեր, նոր, պողպատով ամրանավորված այսումինե հաղորդալար (ՊԱԱՀ), նոր օպտիկական մանրաթելով՝ ամպրոպապաշտպան ճոպան (ՕՄԱԾ), հողակցում յուրաքանչյուր հենարանի տեղում, «Ալավերդի-2» ենթակայանի միջոցով նոր կապեր Ազգային էներգահամակարգի հետ, նոր միացումներ Հաղթանակում գտնվող «Նոյեմբերյան» բաշխիչ ենթակայանի հետ, և նոր հիմնական ՕԳ-ից Տ-ածն ճյուղավորմամբ միացումներ «Ախթալա» քարշային ենթակայանի և Թեղուտի «Մատուռ» լեռնահանքային ենթակայանի համար:

Նոր ՕԳ-ը պետք է կառուցվի նոր միջանցքում (50մ լայնությամբ), որոշ մասերում առկա միջանցքից մոտ 50մ-ով շեղումներով, որը պահանջվում է բնակավայրերից և զգայուն բնական ռեցեպտորներից խուսափելու համար: Էլեկտրահաղորդման գիծը ունի կիրճերի վրայով անցնող մի քանի մեծ թոփչքներ: Նոր հենարանների մեծ մասի տեղակայման վայրերն ունեն մոտեցման ճանապարհներ:

Երբ նոր գիծը շահագործման մեջ դրվի, գոյություն ունեցող 110կՎ Լալվար և Նոյեմբերյան ՕԳ-երը պետք է ամբողջովին ապամոնտաժվեն:

Օդային գծերի կառուցման համար նախատեսված են հետևյալ աշխատանքները:

- Գոյություն ունեցող մոտեցնող ճանապարհների վերականգնում և նոր ճանապարհների շինարարություն
- Հենարանների հիմքերի կառուցում, հենարանների տեղափոխություն և տեղադրում
- Օդային գծերի տեղադրում

Տեղանքում առկա են բազմաթիվ ասֆալտապատ և հողածածկ ճանապարհներ: Դրանց մեծ մասը գտնվում են բարվոք (օգտագործելի) վիճակում: Որոշ ճանապարհներ

ժամանակին շահագործվել են, սակայն ներկա իրավիճակում պահանջում են վերականգման աշխատանքներ: Հենարանների տեղադրման շինհրապարակների ընդհանուր մակերեսը 10575.0մ² է: Նախատեսվում է նաև կառուցել նոր ճանապարհներ՝ գումարային երկարությամբ: Վերականգնվող և նոր կառուցվող ճանապարհների ընդհանուր երկարությունը կկազմի՝ 4590.0մ, լայնությունը՝ 4.0մ: Նոր կառուցվող ճանապարհների տեղանքի գգայի մասը գուրկ է բերի հողի շերտից: Ճանապարհների շինհրապարության ժամանակ հանվող և պահեստավորվող բերի հողի ծավալը կկազմի՝ 3335.0մ³:

Ընդամենը նախատեսվում է տեղադրել 97 հատ հենարան, ինչպես նաև 2 հենարան ենթակայանների տարածքներում: Նախատեսվում է տեղադրել երկու տեսակի հենարան՝ անկյունային և միջանկյալ: Իրենց հերթին անկյունային հենարանները կինեն երեք տեսակի՝ թեթև անկյունային հենարաններ՝ 0 – 30°, միջին՝ 30 – 60° և ծանր՝ 60 – 90°:

Հենարանները տեղափոխվում են առանձին կտորներով, որանց չափը պայմանավորված է տրանսպորտային տեղափոխման հնարավորություններով: Տեղափոխումը իրականացվում է անվազոր տրանսպորտային միջոցներով: Հենարանի հավաքում կատարվում է տեղում: Կառուցվում է հիմքը, որի վրա հավաքվում է հենարանը: Տեղադրվում են հենատքերը և շարք շարք բարձրացվում, տեղադրվում և ամրացվում են մետաղական մարմնի (կոնստրուկցիա) մասերը:

Հենարանների տեղադրման համար նախատեսված շինհրապարական աշխատանքների ցուցանիշներն են՝
- բերրի հողի կտրվող ծավալը՝
- հանվող գրունտի ծավալը՝ 11000.0մ³,
- ետիցքը՝ 9500.0մ³,
- բետոնային խառնուրդի ծավալը՝ 2100.0մ³,
- տեղափոխման ենթակա ավելցուկ գրունտի ծավալը՝ 1500.0մ³:

Հենարանների տեղադրումից հետո իրականացվում է մեկուսիչների, կապող և ամրացնող սարքերի տեղադրումը: Լարերը տեղադրվում են հենարանի վերին մասում ամրացված հատուկ թոփշքային սարքի (jumper) միջոցով, որից հետո հատուկ սարքավորման միջոցով լարերը (այդ թվում նաև հողակցման և տեղեկատվության փոխանցման) անց են կացվում մինչև մյուս հենարանը և ամրացվում նույն տեսակի ջամփերների միջոցով:

Հենարանների հիմքերի շինհրապարության և մոտեցման ճանապարհների համար խախտվող հողերի մակերեսները հիմնականում մնում են կառուցապատման տակ և այսպիսով օգտահանված բերրի հողի հիմնական զանգվածը տեղում չի օգտագործվելու ռեկուլտիվացիոն նպատակներով: Օգտահանված բերրի հողի պահեստավորման և պահեստավորված բերրի հողի պահպանության ծախսերից խուսափելու նպատակով նախապես պետք է միջոցառումներ մշակվեն օգտահանված բերրի հողի կիրառման խնդիրները լուծելու համար: Օգտահանված բերրի հողի շերտի ծավալը հաշվառվում և տնօրինվում է մարզպետարանի թույլտվությամբ՝ « կառավարության որոշման համաձայն: Մարզպետարանի հսկողությամբ նախատեսվում են տարածքներ օգտահանված բերրի հողի պահեստավորման և պահպանման համար:

Համաձայն Մշակույթի նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների անվտանգության գործակալության կողմից տրամադրված տեղեկատվության, առաջարկվող գծի միջանցքը չկան ոչ մի պատմական կամ մշակութային վայրեր:

Պլանավորված 110կՎ ՕԳ-ի միջանցքը հատում անցնում է Հաղպատ գյուղը, որտեղ գտնվում է գրոսաշրջության համար ազգային կարևորություն ունեցող Հաղպատի վանքը: Այնուամենայնիվ, վանքը ուղղակիորեն չի ենթարկվի ազդեցության, քանի որ գծի միջանցքը ունի ավելի քան 450.0մ հեռավորություն վանքից: Հենարանների վիզուալ ազդեցությունները նվազեցնելու համար ին 110կՎ ՕԳ-ն ամբողջովին կապամոնտաժվի:

Սա ներառելու է այլև չօգտագործվող հենարանների հիմքերի ապամոնտաժումը և տեղանքից հեռացումը: Այսպիսով, հենարանների քանակությունը կմնա թիւ թե շատ նոյնը:

Հատուկ շինհրապարակներ և շինճամբարներ չեն կառուցվում: Որպես շինհրապարակ օգտագործվում է յուրաքանչյուր հենարանի համար նախատեսված տարածքը: Շինարարների կացարանը կազմակերպվելու է մոտակա բնակավայրում:

Շինարարական աշխատանքների նախատեսվում է առավելագույնը 100 աշխատողի մասնակցություն:

Լալվար և Նոյեմբերյան օդային գծի շինարարության ժամանակ ջուրը օգտագործվելու է շինհրապարակների ջրանի, հանվող գրունտի խոնավացման և սպասարկող անձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար: Նախատեսվող գործունեության համար կօգտագործվի $3123.8\text{m}^3/\text{տարի}$ քանքակի ջուր, որից անվերադրծ օգտագործումը կամ կորուստը՝ $2639.0\text{m}^3/\text{տարի}$, իսկ ջրահեռացումը՝ $484.8\text{m}^3/\text{տարի}$:

Խմելու ջրի մատակարարումը կատարվում է ապակյա տարաներով: Ջրանի համար ջուրը վերցվում է մոտակա բնակավայրի ջրացանցից՝ համայնքապետարանի հաշվեկշռից: Կենցաղային նպատակների համար յուրաքանչյուր շինհրապարակում տեղադրվում են շարժական սանհանգույցներ մետաղական ստորգետնյա տարողություններով, որոնց պարունակությունը հատուկ մեքենաներով պարբերաբար տեղափոխվում են մոտակա կոյուղու ցանց: Շարժական սանհանգույցները տեղափոխվում են տեղամասից տեղամաս: Հաշվի առնելով աշխատանքների ժամանակավոր բնույթը՝ արտանետումների ոչ մեծ քանակները, ազդեցությունը մթնոլորտային օդի վրա կլինի ցածր:

Լալվար և Նոյեմբերյան օդային գծի շինարարության ժամանակ շինարական հրապարակների, հենարանների հիմքերի և նոր ճանապարհների շինարարության ժամանակ կվնասվի այդ տեղամասերի հողածածկը: Ընդամենը կվնասվի 22635.0m^2 տարածք: ՕԳ որոշ հատվածներ անցնելու են անտառային տարածքներով և այս տեղամասերում հենարանների հիմքերի վրա գտնվող ծառերը պետք է հատվեն:

ՕԳ-ի տարածքում աճող ծառերի և թփուտների վերմասերը ժամանակ առ ժամանակ պետք է կտրվեն՝ բուսականության և հաղորդիչ մալուխների միջև 7.54m թուլատրելի նվազագույն միջակայքը պահպանելու նպատակով: Եթե գիծը թոփչը ունենա անտառապատ սարալանջերի և հովիտների վրայով, և նվազագույն միջակայքը պահվի, ապա սպասարկման ժամանակ լրացնից ծառահատումների անհրաժեշտություն չի լինի:

Թոչունները պատկանում են այն խմբին, որոնք ամենաշատն են ազդեցության ենթարկվում ՕԳ-ի պատճառով դրանց շահագործման ընթացքում հիմնականում էլեկտրահարվելու և բախվելու ռիսկի պատճառով:

Մանրամասն տեղեկատվություն չկա թոչունների չվելու ճանապարհի մասին, բայց հայտնի է, որ Հայաստանը չի ընկնում հիմնական միգրացիոն ճանապարհներից ոչ մեկի վրա, որը գտնվում է երկրի արևելքում և արևմտաքարտ: Միգրացող թոչունները թոչում են $800\text{m}-ից$ ավել բարձրության վրա: Պլանավորված ՕԳ-ն չի հատվում թոչունների Պաշտպանության Միջազգային Ասոցիացիայի կողմից որոշված թոչունների համար կարևոր որէն տարածքի հետ:

Նախատեսվող գործունեության ընթացքում ՕԳ-ի որոշ հատվածներ անցնելու են անտառային տարածքներով, որի արդյունքում անհրաժեշտ է առցանում հատել նշված տարածքում առկա ծառերի որոշակի քանակ: Ըստ ներկայացված փաստաթղթերի, Հատվող թփուտներ- մոտեցման ճանապարհների կառուցման և բարեկարգման ընթացքում – 3200.0m^2 , հենարանների տեղադրման շինհրապարակներ – 755.0m^2 , ընդամենը – 3955.0m^2 :

Հատվող ծառեր- մոտեցման ճանապարհների կառուցման և բարեկարգման ընթացքում – 1260հատ , հենարանների տեղադրման շինհրապարակներ – 134 հատ, ընդամենը – 1394

հատ: Հատվող ծառերի տեսակային կազմը և բնի հաստությունը ներկայացվում է այլուսակում:

Հատվող ծառի տեսակը	Հատվող ծառի բնի հաստությունը, սմ /գետնի մակերսույթից 10 սմ վեր/						Ընդամենը
	2-5 /մատղաշ/	6-10	11-15	16-25	26-35	36-ից բարձր	
1 Կաղնի վրացական	3				6		9
	81	3	5		1		90
2 Բոխի /դաճի/	48	2	2	3			55
	830	27	7	6			870
3 Հոնի	2	13	6				21
	75	44	2				121
4 Հացենի	3	6	1				10
	75			1			76
5 Ճապկի		14	1				15
	38	12					50
6 Թիսկի վրացական				1			1
	37						37
7 Փոշնի		7	1		4	6	18
				18	4		22
8 Պտղատու			10				10
Ընդամենը	1192	128	35	29	15	6	1405

Լավար և Նոյեմբերյան ՕԳ-երի ծրագիր հետ կապված հատուկ մտահոգություն ներկայացնող տարածքները հետևյալն են.

- Հաղպատ գուղի արևմտյան մասում տեղակայված տները (ԱՀ 8 և ԱՀ 9 միջև),
- Նեղոց գյուղում տեղակայված տները, որոնց վրայով պետք է անցնի գիծը (ԱՀ 21 և ԱՀ 22 միջև): Փոքր Այրումի հարավային հատվածքում տեղակայված շինությունը, որի վրայով պետք է անցնի գիծը մինչև Դեբեդ գետը հատելը (ԱՀ 23 և ԱՀ 25 միջև):
- «Նոյեմբերյան» ենթակայանի մոտակայքում գտնվող տները:
- Հաղպատ գյուղի և հարավ, դեպի Փոքր Այրում հոսող Դեբեդ գետի անցումի միջև անտառային տարածքը (ԱՀ 13 և ԱՀ 24 միջև): Այս տարածքներում մեծ թոփչքով հենարանները կտեղադրվեն բլուրների կատարներին, որպեսզի թոփչք լինի անտառապատ լանջերի և հովիտների վրայով՝ այսպիսով նվազագույնի հասցնելով ծառահատումները:

Քանի որ նոր 110կՎ ՕԳ-երի առաջարկված միջանցքը մոտ կլինի գործող 110կՎ և 220կՎ գծերի միջանցքներին, կօգտագործվեն արդեն առկա մոտեցման ճանապարհները/ուղիները: Համաձայն “Տրակտերել ինժինիրինգ” ընկերության (2014), նոր տեղադրվող հենարանների համար 80%-ով առկա են մոտեցման ճանապարհներ կամ ուղիներ: Մասնավորապես ԱՀ 13 և ԱՀ 24 միջև ընկած տարածքը, որտեղ գծի միջանցքը հատում է անտառապատ բլուրը և գնում դեպի Դեբեդ գետի հարավային մասում գտնվող լեռնային տարածք, առկա մոտեցման ուղիները պետք է վերականգնվեն (օր. ուղիները ծածկած բուսականության կտրում) և որոշ նոր ճանապարհներ պետք է կառուցվեն: Էրոզիան կանխարգելող միջոցառումներ պետք է իրականացվեն, որոնք թվում են՝ ճանապարհի եզրերի երկայնքով թփեր տնկելը և ջրահեռացման համակարգ անցկացնելը: Մոտեցման ճանապարհները, որոնք շինարարությունից հետո այլև անհրաժեշտ չեն լինի, կվերականգնվեն և բոլոր կվերատնկվեն:

Ներառվող տարածքի մեծ մասը բաղկացած է գյուղատնտեսական հողերից, արոտավայրերից և բլուրային տարածքներից: Առաջարկվող գծի հողերի մոտ 47% օգտագործվում է գյուղատնտեսական նպատակներով, 23%-ը անտառային տարածք է, արոտավայրերը կազմում են մոտ 16%, թփուտները մոտ 8% և այգիները մոտ 4% (գնահատվել է արբանյակային լուսանկարահանման հիման վրա): Շինարարական

աշխատանքները պետք է իրականացվեն պատշաճ զգուշությամբ, որպեսզի սահմանափակվի բացասական ազդեցությունը ֆլորայի և ֆաունայի վրա: Առաջարկվող 110ԿՎ ՕԳ-երի միջանցքում կամ մոտեցման ճանապարհների պատճառով բնության հատուկ պահպանվող տարածքներ բացասական ազդեցության չեն ենթարկվի: Բասացական ազդեցությունը անտառների որոշ հատվածների վրա անխուսափելի է, քանի որ ԱԳ-ի մի մասում տեղի կունենա ծառահատում, որը կարող է հանգեցնել բնական միջավայրի փոփոխության:

ՕԳ-ի տարածքում աճող ծառերը և թփուտները ժամանակ առ ժամանակ պետք է կտրվեն՝ բուսականության և հաղորդիչ մալուխների միջև 7.5մ թուլատրելի նվազագույն միջակայքը պահպանելու նպատակով: Եթե գիծը թույզը ունենա անտառապատ սարալանջերի և հովիտների վրայով, և նվազագույն միջակայքը պահվի, ապա սպասարկման ժամանակ լրացուցիչ ծառահատումների անհրաժեշտություն չի լինի: Միջանցքները մաքրելու համար չպետք է օգտագործվեն բիոհիդներ:

Ընդհանրացնելով և վերլուծելով ներկայացված նախագծային փաստաթղթերը, << բնապահպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստացված կարծիքները, իրականացված հանրային քննարկումների արձանագրությունները, ինչպես նաև փորձաքննության գործընթացում ի հայտ եկած դիտողությունների ու առաջարկությունների հիման վրա լրաշակված նախագծային փաստաթղթերը կարելի է անել հետևյալ եզրահանգումներ:

Առկա բնապահպանական իրավիճակի և բարձրավոլտ գծի տեխնիկական պլանավորման հիման վրա՝ համաձայն ներկայացված փաստաթղթերի, նախատեսվող օդային գծի շինարարության և շահագործման փուլերի համար գնահատվել է բնապահպանական և սոցիալական ազդեցությունները: Ազդեցության գնահատման գործընթացում քնարկվել են ծրագծի չորս այլընտրանքային տարրերակներ, կապված բնապահպանական միջամտության ծավալի, հարկադրական վերաբնակեցման և հիմնված հետևյալ չորս սկզբունքների վրա.

- Նվազագույնի հասցնել բացասական ազդեցությունները լանդշաֆտի, կենսաբազմազանության վրա, զերծ մնալով միջամտությունից պահպանվող տարածքներում,
- խուսափել մշակութային ժառանգություն հանդիսացող վայրերից և էկոլոգիական հետաքրքրություն ներկայացնող տարածքներից,
- խուսափել բնակավայրերից և կառուցապատման տարածքներից՝ հարկադրական վերաբնակեցման նվազագույնի հասցնելու նպատակով:

Նախատեսվող 110ԿՎ Լալվար և Նոյեմբերյան օդային գիծն անցնելու է << Լոռու մարզի Ալավերդի քաղաքային համայնքի, Հաղպատ, Ծոճկան, Մեծ Այրում, Նեղոց գյուղական համայնքների և << Տավուշի մարզի Այրում քաղաքային համայքի տարածքներով: Օդային էլեկտրահաղորդման գիծը անբողոքությամբ նախագծվել է հաշվի առնելով շրջակա միջավայրի վրա ազդեցության և վերաբնակեցման խնդիրները, նվազագույնի է հասցել ազդեցությունը մշակութային և պատմական վայրերի վրա՝ հատկապես այն տարածներում, որտեղ դեռևս պեղումներ չեն կատարվել, ներգրավելով <<Պատմության և մշակութի հուշարձանների պահպանության>> վարչության անդամներին շինարարության կապալառուների կողմից գծի վերջնական ուղղության ընտրության գործընթացում:

Պատմական մնացորդների պատահական հայտնաբերման դեպքում նախատեսվում է շինարարությունը անմիջապես դադարեցնել, այդ մասին տեղեկացնելով Հուշարձանների պահպանության վարչության/մշակութային ժառանգության վարչության տեղական ներկայացուցիչն:

Լալվար և Նոյեմբերյան ՕԳ-երի փոխարինման ծրագրի ընթացքում խախտված տեղամասերի մակերեսներն են.

ա/ հիմնական և միջանկյալ հենարանների հիմքի և շինհրապարակի գումարային մակերեսը, որը յուրաքանչյուր հենարանի համար միջին հաշվով՝ 225.0մ² մակերես է, ներառյալ շինհրապարակները, որից 100.0մ²-ը մնում է հենարանի տակ և չի վերականգնվում, մնացած մակերեսը անհրաժեշտ է շինհրարական տեխնիկայի տեղաշարժերի համար (հենարանների և հոսանքատար լարերի մոնտաժման ընթացքում): 97 հենարանի համար այդ մակերեսը կկազմի 21825.0մ², որից 9700.0մ² մակերեսից օգտահանվում է բերրի հողաշերտը, եթե այն առկա է:

բ/ Մոտեցման նոր ճանապարհների մակերեսը կկազմի 18360.0մ²: Սակայն այդ ճանապարհները կշարունակեն օգտագործել 04 սպասարկման, ինչպես նաև համայնքների հաղորդակցման համար և ենթակա չեն վեչակուլտիվացման:

Վերականգնման (ոեկուլտիվացման) ենթակա հողերի մակերեսը կկազմի՝ 21825.0մ²: Նոր օդային գիծը շահագործման հանձնելուց հետո, նախատեսվում է ապամոնտաժել հին գիծն ամբողջությամբ: Պողպատե մասերը նախատեսվում է ենթարկել վերամշակման կամ օգտագործել որպես պահեստային մասեր, ինչի շնորհիվ նվազագույնի հասցնելով ԷԳ-ների ֆիզիկական ներկայության հետևանքով ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Նախատեսված միջոցառումների արդյունքում (Լալվար և Նոյեմբերյան 110կՎ էլեկտրահաղորդման օդային գծի փոխարինման՝ վերակառուցման, ընթացքում) տարածքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադիչներով, կգտնվի թույլատրելի նորմայի սահմաններում: Նախագծում լրիված են գրութների տեղափոխման, կեղտաջրերի հեռացման, աղբահեռացման, մթնոլորտի աղտոտվածության նվազեցման հարցերը: Նախատեսված են շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված բավարար միջոցառումներ: Այսպիսով, հիմք ընդունելով նախնական հետազոտությունների արդյունքները՝ 110կՎ նոր երկշղթա 04-ը փոխարինման ենթակա գործող Լալվար և Նոյեմբերյան 04-երին աշխատանքները կարող է իրականացվել, շահագործվել առանց սոցիալական և էկոլոգիական նշանակալի բացասական ազդեցությունների ուսումնասիրվող տարածքում և նրա շրջակայքում, եթե իրականացվեն բոլոր առաջարկվող մեղմման միջոցառումները:

Փորձաքննական պահանջներ

1. Մինչ գործունեության իրականացումը անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները:
2. Անհրաժեշտ է կազմել, և շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցնել անտարի վերականգնմանն ու փոխհատուցմանն ուղղված միջոցառումների ծրագիրը:
3. Անտառահատումները իրականացնել աստիճանաբար՝ նախատեսվող աշխատանքների գարգացման ծրագրին համընթաց, համաձայն ՀՀ կառավարության N 1045-Ն որոշման պահանջների:
4. Անտառապատ սարալանջերի և հովիտների վրայով նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույն պահպանել բուականության և հաղորդիչ մալուխների միջև 7.54մ թույլատրելի նվազագույն միջակայքը՝ սպասարկման ժամանակ լրացուցիչ ծառահատումների անհրաժեշտությունից խուսափելու համար:
5. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույն հետևել նախագծային փաստաթղթերում և ՇՄԱԳ հաշվետվությունում

ամրագրված բնապահպանական և սոցալական կառավարման ծրագրի պահանջներին՝ բացառելով հատուկ պահպանվող տարածքներում ցանկացակ աշխատանքների իրականացումը, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցից միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը:

6. Գործունեության ընթացքում իրականացվող շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող և այլն) մոնիթորինգի, հետևախագծային միջոցառումների իրականացման վերլուծության հաշվետվությունը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմինների և հասարակայնության համար:

7. Շինարարության և շահագործման ընթացքում առաջացած շինաղբը (կենցաղային աղբ), ինչպես նաև ջրօգտագործումը անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Շինարարական փուլում՝ շինարարական աշխատանքների կազմակերպման պլանի մշակման ընթացքում, ներկայացված նախագծային հիմնական լուծումներից շեղվելու դեպքում (որը կբերի շրջակա միջավայրի վրա զգալի ազդեցության), ինչպես նաև հին գծի ապամոնտաժման համապատասխան փաստաթղթերը անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել ՀՀ բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ կողմից ներկայացված «110կՎ Լալվար և Նոյեմբերյան օդային գծի փոխարինում» նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:



Կ. Մովսիսյան